

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆՑ (1858—1912)

Գերեզման իջաւ հայագիտութեան նշանաւոր ներկայացուցիչներից մէկը—պոփեոսոփ Գրիգոր Խալաթեանցի Այդ կորուստը խիստ զգալի է, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ հանգուցեալն աշխատում էր հայագիտութեան այն բաժնում, որ շատ աւելի մեծ կարիք ունի հմուտ և լուրջ պատրաստութիւն ունեցող գիտնականների:

Հայագիտութիւնը չը նայած իւր պատկառելի անցեալին դեռ սաղմային վիճակի մէջ է: Ընդհատ է, հայագէտների շարքերը ստուարացել են նաև Եւրոպացի առաջնակարգ գիտնականներով, սակայն հայագիտութիւնը համեմատաբար այլ կուլտուրական ազգերի անցեալի ուսումնասիրութեան հետ և չնորհիւ նիւթի հսկայական չափերին, արել է շատ փոքրիկ քայլեր: Այդ համեստ յաջողութեամբ ևս հայ գրականութիւնը պարտական է գլխաւորապէս մի հանգամանքի. 19-րդ դարի առաջին կիսում հաստատուեց, որ հայերէնը մի ճիւղն է այն մեծ լեզուական ընտանիքի, որին պատկանում են բոլոր նշանաւոր Եւրոպական և ասիական լեզուները և որ կոչւում է Հնդկ-ըրոպական ընտանիք: Այդ հանգամանքը հայագիտական ասպարէզ գրաւեց մի շարք Եւրոպական առաջնակարգ մեծութիւններ, որոնք զուտ գիտական հիմքերով զարգացրին հայագիտութեան մի նշանաւոր ճիւղը—լեզուի ուսումնասիրութիւնը: Շնորհիւ այդ հանգամանքի հայկական լեզուաբանութիւնն այժմ գտնւում է անհամեմատ աւելի նպաստաւոր պայմանների մէջ, քան գրականութիւնն ու պատմութիւնը, որոնք դարեր շարունակ ուսումնասիրութեան առարկայ են ծառայել ոչ միայն հայ, այլ և Եւրոպացի գիտնականներին համար:

Հայագիտութեան համար շատ կարևոր էր, որ նրա ներկայացուցիչները, մանաւանդ 19-րդ դարից սկսած, զինուած լինէին Եւրոպական գիտութեամբ և գործադրէին գիտական յուսալի մեթոդներ: Այդպիսի գիտնականներ են բացի սակաւաթիւ ազգայիններէց (գլխաւորապէս Մխիթարեան ուխտից), նախ և առաջ մի շարք Եւրոպացիներ, իսկ նրանց կողքին պատուաւոր տեղ են գրաւում ռուս գիտութեան մի քանի ներկայացուցիչներ, մեծ մասամբ հայազգի: Պետերբուրգի համալսարանի Արևելեան ֆակուլտետն և Լազարեան ճեմարանը առաջ քաշեցին մի շարք խոշոր հայագէտներ, որոնք կենտրոնացրին իրենց ուշադրութիւնը գլխաւորապէս բանասիրութեան վրայ և այդ մասում առաջնակարգ տեղ գրաւեցին:

հայագէտների շարքերում ընդհանրապէս Դրանք են պոռֆ. Պատկանեան, Մառ, Էմին և Խալաթեանց:

Գրիգոր Աբրահամեան Խալաթեանց ծնուել է Աղէքսանդրապօլում 1858 թւին ունեոր ընտանիքում: Սկզբնական կրթութիւն ստացել է Լազարեան ճեմարանում, որի դպրոցական դասընթացն աւարտելուց յետոյ մտել է Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Երկու տարի այդտեղ լսելուց յետոյ Խալաթեանցը իւր ուսուցիչ Էմինի խորհրդով թողնում է բժշկութիւնը և անցնում է պատմա-քննասիրական բաժինը, որտեղ և ստանում է իւր բարձրագոյն մասնագիտական ուսումը: Այդ տեղից նա դուրս է բերում շատ լաւ յիշողութիւններ և ութսունական թւականների գործիչներին յատուկ եռանդ և սէր դէպի հասարակական գործունէութիւն: Էմինի մահից յետոյ Խալաթեանցը գրաւում է նրա ամբիոնը Լազարեան ճեմարանում 1883 թւին: 1898 թւին նա կարգւում է ճեմարանի տեսուչ, սակայն 1903 թւին շորհիւ թոյլ առողջութեան ստիպուած է լինում թողնել այդ պաշտօնը: Վերջերս Խալաթեանցը Տիխիս էր նկել վերականգնելու իւր քայքայուած առողջութիւնը, սակայն փետրուարի 8-ին կնքեց իւր մահկանացուն Շահպարտեանի մասնաւոր հիւանդանոցում:

Խալաթեանցը իւր երեսնամեայ գիտական գործունէութեան ընթացքում թողել է բազմաթիւ գրուածքներ, ուսերէն, հայերէն և գերմաներէն լեզուներով, որոնք վերաբերում են Հայոց պատմութեան, գրականութեան և ազգագրութեան: Այդ աշխատութիւնների մէջ առաջնակարգ տեղ է բռնում նրա ուսումնասիրութիւնը Խորենացու մասին, բաղկացած երկու հատորից (ա. հատ. — Армянский эпосъ въ Исторіи Моисея Хоренскаго, ч. I Исслѣдование, ч. II матеріалы, Москва, 1896.—բ. հատոր—Армянскіе Аршакиды въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго, ч. I Исслѣдование, ч. II матеріалы, Москва, 1903.), որ երկար տարիների մանրակրկիտ և բարեխիղճ աշխատութեան արդիւնք է և որ ծառայել է նրան որպէս մագիստրոսական (I հատոր) և դոկտորական (II հատոր) դիսսերտացիա: Մինչև առաջին հատորի լոյս տեսնելը և նրանից յետոյ Խալաթեանց գրել է Խորենացու մասին մի շարք յօդուածներ գերմաներէն, ուսերէն և հայերէն (WZKM, ЖМНП և առանձին գրքոյկներ):

Խորենացու երկհատոր ուսումնասիրութիւնն ընդկրղում է այն բոլոր ուսումնասիրութիւնները, որոնք գրուած են զանազան լեզուներով Մ. Խորենացու մասին և ցոյց է տալիս բազմաթիւ զբրուածքներ, որոնցից կարող էր օգտուել Խորենացին իւր պատմութիւնը գրելիս: Խորենացու պատմութեան ժամանակի մասին Խալաթեան յանդում է նման ևզրակացութեան, ինչ որ ֆրանսիացի

գիտնական կարրիէր, այն է, որ նա գրուած պէտք է լինի ոչ վաղ քան 8-րդ դարը, որովհետև նրա համար Խորենացին օգտուել է մի քանի յոյն և հայ հեղինակներից, որոնք պատկանում են 7—8 դարին: Խորենացու պատմութիւնը Խալաթեանց համարում է այդպիսով անվստահելի աղբիւր և տեղեկնցիող գրուածք: Հայկական վէպն ըստ Խալաթեանցի արհեստական է. Խորենացին ինքն է կազմել այդ վէպը, նիւթ առնելով գլխաւորապէս աստուածաշնչից:

Խալաթեանցի կարեւորագոյն պատմական գրուածքներից պէտք է համարել նաև «Очеркъ Исторіи Арменіа въ связи съ общимъ ходомъ событій въ Передней Азіи». Періодъ I: Древняя исторія, Москва, 1910, կազմուած նրա դասախօսութիւններից, որոնք համապատասխանելով արգի գիտութեան պահանջներին, պարունակում են խիստ կարևոր կապակցուած տեղեկութիւններ Հայոց պատմութեան նախնական շրջանից: Մինչև այժմ լոյս է տեսել դժբաղդաբար միայն Ա. մասը, որ ընդգրկում է հին շրջանը մինչև Տրդատ և քրիստոնէութեան մուտքը Հայաստան: Թերևս հանգուցեալի անտիպ աշխատութիւնների մէջ գտնուեն դասընթացի միւս մասերն ևս, որոնց հրատարակութիւնը շատ ցանկալի է: Այս գեղեցիկ աշխատութիւնը կարող է ուղեցոյց ծառայել մեր թեմական և այլ դպրոցների Հայոց պատմութեան ուսուցիչներին:

Հայոց գրականութեան վերաբերմամբ Խալաթեանցն ունի մի շարք ուսումնասիրութիւններ, որոնցից յիշենք հետևեալները.—

«Զեհոբ Գլակ», Վիեննա, 1893, որտեղ Խալաթեանց հերքում է ընդունուած կարծիքը Զեհոբի մասին, իբր թէ նա եղել է Լուսաւորչի օգնական ասորի եպիսկոպոս:

«Ղազար Փարպեցի եւ գործք նորին», Մոսկուա 1883 թ.— սա Խալ.-ի առաջին գործն է, գրաբար լեզուով: Այստեղ Խալ. հաստատում է տյն միտքը, որ Ղազար Փարպեցին օգտուել է Եզրիչից և Խորենացուց, սակայն ապագայում Խալ. ստիպուած էր հրաժարուել այդ մտքից:

Հայ ազգագրութեանը Խալաթեանց մատուցել է շատ մեծ ծառայութիւն իւր հետեևալ գրքոյկով.

«Մրգաիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների» Մոսկուա, 1887 թ.,— առանձին ցանկով, որտեղ զետեղուած են ազգագրական նիւթեր պարունակող զանազան գրքեր: Այս ծրագիրը մեծապէս նպաստեց ապագայում ազգագրական նիւթեր հաւաքելուն: Ազգագրութիւնը, որ մեզնում այժմ համեմատաբար բաւարար դրութեան մէջ է, գլխաւորապէս շնորհիւ Ե. Լալայեանի համեստ գործունէութեան, պարտական է մեծ շափով նախ և առաջ պոռֆ. Խալաթեանցին:

Խալաթեանցի խմբագրութեամբ լոյս են տեսել «Էմիցեանց ազգագրական ժողովածուի» 8 հատոր, որոնց մէջ մի քանիսը շատ արժէքաւոր գործեր են:

Խալ. հրատարակել է մի շարք կարևոր յիշատակարաններ, սրանցից յիշենք 1) Մնացորդաց գրքի ա. և բ. գլուխների թարգմանութիւնը—Մոսկուա, 1899: Այս կարևոր յիշատակարանը թարգմանուած է հաւանականաբար ասորական վերսիայից: Թարգմանութիւնն անկասկած աւելի հին է, քան աստուածաշնչի եօթանասնից թարգմանութիւնը և այդ պատճառով ունի գիտական մեծ կարևորութիւն: Գտնուել է առաջին անգամ 1896 թ. Խալ.-ի ձեռքով էջմիածնի Ժէ. դարի մի ձեռագրի մէջ, իսկ ապա շնորհիւ նրա յայտարարութեան, նաև Երուսաղէմի մի Ժ.Գ. դարի ձեռագրի մէջ:

2) Հնագոյն հայ աւետարանի հրատարակութիւնը, որ կատարել է Խալ. 887 թ-ի ձեռագրից, Մոսկ. 1899 թ., լուսատիպ:

Խալ.-ի այլ հրատարակութիւններից յիշելու արժանի են 1) Ռափայէլ Պատկանեանի ընտիր երկերի երկհատոր հաւաքածուն Մ. Պետերբուրգ 1893 թ. և 2) Էմինի երկերի հաւաքածուն, բաժանած 4 հատորների, Մոսկուա 1893—98:

Խալ.-ի աշխատութիւնների լիակատար ցանկը մենք առաջ չենք բերում, հետաքրքրուողները կարող են գտնել յիշեալ «Очеркъ Историі Арменіи» գրքի չապկի վրայ:

Խալաթեանց գիտական գործունէութիւնից դուրս սիրում էր մասնակցութիւն ունենալ նաև ազգային-հասարակական խնդիրներում: Նա յալտնի էր Մոսկուայում որպէս շիտակ և եռանդոտ հասարակական գործիչ: Այսպէս ճանաչում էին նրան և զբաւում, որտեղ նա ծանօթ էր բոլորին իւր բազմաթիւ յօդուածներով, որոնք լոյս էին տեսնում հայ պարբերական մամուլի մի քանի օրգանների մէջ:

Յանձին Գր. Խալաթեանցի հայ գիտութիւնը ողբում է իւր կարող ներկայացուցիչներից մէկի, իսկ հայ հասարակութիւնը իւր լաւագոյն անդամներից մէկի վաղաժամ և անփոխարինելի մահը:

Ռ. Արաբամեան.

